ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"26" Հոկտեմբերի 2025թ. N 3234-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 26 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 26 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

11/26/2025

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Signed by: SIMONYAN ARMEN 4003890647 **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

ք. Երևան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 26

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

18 նոյեմբերի 2025թ. ք. Երևան

2025 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 12:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի հատուկ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Դ. Մելքոնյանը
Գ. Խաչատրյանը

«Ավտոփայլ» ՍՊԸ-ից՝ Կ. Պետրոսյանը ,«Գավառտրանս» ՍՊԸ-ից՝ Հ. Գուլաբյանը, «Ռաֆ և Էլ» ՍՊԸ-ից՝ Ա. Սմբատյանը:

Օրակարգում՝

Գեղարքունիքի մարզի Գավառ, Սևան և Ճամբարակ, Վարդենիս և Մարտունի տարածաշրջանների միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ին կայանալիք մրցույթի մասնակցության համար ներկայացված փաթեթների բացումը:

Քննարկվեց՝

Գեղարքունիքի մարզի Գավառ, Սևան և Ճամբարակ, Վարդենիս և Մարտունի տարածաշրջանների միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ին

կայանալիք մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերի համապատասխանության հարցը ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Արձանագրվեց՝

1. Գեղարքունիքի մարզի Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ին կայանալիք մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացվել է երկու հայտ՝ «Ավտոփայլ» ՍՊ ընկերությունը և «Ռաֆ և Էլ» ՍՊ ընկերությունը, Գավառ տարածաշրջանի համար՝ «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը, իսկ Վարդենիս և Մարտունի տարածաշրջանի համար հայտ չի ներկայացվել:

2. «Ավտոփայլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաթեթում առկա են հետևյալ թերությունները,

2.1. հայտում N 1-ում առկա են տեխնիկական վրիպակներ,

2.2. անհրաժեշտ է ավտոմեքենաների մատակարարման փաստաթղթում առանձին ներկայացնել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգի (այսուհետ՝ մրցութային կարգ) 14-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը,

2.3. հավաքակայանի հատակագծում բացակայում են դիտափոսի չափերը:

3. «Գավառտրանս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաթեթում առկա են հետևյալ թերությունները.

3.1. անհրաժեշտ է ավտոմեքենաների մատակարարման փաստաթղթում առանձին ներկայացնել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգի (այսուհետ՝ մրցութային կարգ) 14-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը:

4. «Ռաֆ և Էլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաթեթում առկա են հետևյալ թերությունները.

4.1.ընկերության հաշվեհամարը սխալ է.

4.2. անհրաժեշտ է ավտոմեքենաների մատակարարման փաստաթղթում առանձին ներկայացնել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգի (այսուհետ՝ մրցութային կարգ) 14-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի պահանջները՝

Որոշվեց՝

«Ավտոփայլ», «Գավառտրանս» և «Ռաֆ և Էլ» ՍՊ ընկերություններին տրամադրել ժամանակ մինչև 2025 թվականի նոյեմբերի 21-ը ժամը 12:00-ն՝ վերոնշյալ թերությունները վերացնելու համար:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Դ. Մելքոնյան

Գ. Խաչատրյան